Բաղկացած է 11 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Գավառ համայնքի ավագանու
17.01.2025 թ. արտահերթ նիստի թիվ 4-Ա
որոշմամբ

Գավառ համայնքի ղեկավար

_____ Գ. Ե. Մարտիրոսյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակից
Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Գավառի տարածքային
բաժնի կողմից՝

« »_____20 թ.
Գրանցման թիվ_____
ՀՎՀՀ_____
« »_____20 թ. գրանցված
կանոնադրության թիվ _____

Փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

« »_____20 թ.

«ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք
2025 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գավառի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մշակութային տեղեկատվական կրթական և կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքային համայնքն է /այսուհետ՝ Հիմնադիր/, որի իրավահաջորդն է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքը (այսուհետ՝ Հիմնադիր), և որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարը:
3. Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետի 27.01.2006 թ. թիվ 289 և Գավառ քաղաքային համայնքի ավագանու 30.01.2006 թ. թիվ 3/1 որոշումների համաձայն, Գեղարքունքի մարզի Գավառի քաղաքային գրադարան համայնքային հիմնարկի (պետական գրանցման) հաշվառման (թիվ.25.180.00858, վկայական 01Բ 000394) վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է նրան ամրացված իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան: Հետագայում Գավառ համայնքի ավագանու 11.03.2009 թ. թիվ 2 նիստի և Գավառի քաղաքապետի 27.04.2009 թ. թիվ 195 որոշումներով կազմակերպությունը Գավառ քաղաքի «Արծվաքար թաղամասի ակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման) հաշվառման (թիվ 25.210.01026, վկայական 03 Ա 071454) և Գավառ քաղաքի «Հացառատ թաղամասի ակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման) հաշվառման (թիվ 25.210.01030, վկայական 03 Ա 071458) միացման ճանապարհով վերակազմակերպվել է և հանդիսանում է նաև նրանց ամրացված իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին և իրավաբանական անձանց վերակազմակերպման (միացման) պայմանագրի համապատասխան:
4. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման (և դադարում է լուծարման ավարտի) լուծարման պետական գրանցման) պահից:
5. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, ք. Գավառ, Կահիրեի 11:

7. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Գավառի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
8. Կրճատ անվանումը՝ «Գավառի համայնքային գրադարան» ՀՈԱԿ:
9. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
10. Կազմակերպությունը ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:
11. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
12. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
13. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:
14. Կազմակերպության տարածքային ստորաբաժանումները կարող են տեղակայվել այլ հասցեներում՝ Հիմնադրի որոշմամբ:
15. Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքների համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
16. Կազմակերպությունն առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են հաստատված կանոնադրան հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են լիազորագրերի հիման վրա:
17. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:
18. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
19. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

20. Կազմակերպությունը ստեղծվել է տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն իրականացնելու համար:

21. Կազմակերպությունն է ապահովում է համայնքի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, համալրում է գրադարանային հավաքածուն հանրապետական, մարզային, տեղական տեղեկույթ կրող համապատասխան նյութական կրիչով, ինչպես նաև էլեկտրոնային շտեմարանի միջոցով իրականացնում է դրանց պահպանումը՝ նպաստելով ներկայացուցիչների կրթելուն, իրազեկելուն, ներգրավելուն կամ ժամանցը կազմակերպելուն:
22. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝
ա) մշակութային գործունեության իրականացում,
բ) բնակչության գրադարանային- տեղեկատվական սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի գործունեության օժանդակում,
գ) գրքերի և տպագիր նյութերի գրադարանային ֆոնդը կազմող այլ նյութերի արդյունավետ օգտագործում,
դ) քաղաքականության, հայ համաշխարհային գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում և լուսաբանում, բնակչության քաղաքական, բարոյական, գեղագիտական դաստիարակություն, ազգային ինքնագիտակցության ու հայրենասիրության ձևավորում, մասնագիտական որակի զարգացում, գրադարանային մատենագիտական գիտելիքների ուսուցում ու տարածում, բնակչության ազատ ժամանակի կազմակերպում,
ե) գրադարանային նոր ձևերի ու մեթոդների մշակում, դրանց արմատավորում և տարածում, գրադարանային ֆոնդերի համալրման և հարստացման, հաշվառման, մշակման, բաշխման, սպասարկման, գիտատեխնիկական համակարգի և գիտամեթոդական աշխատանքների կազմակերպում,
զ) գրադարանային ֆոնդի պաշտպանվածության և անվտանգության ապահովում,
է) գրադարանայնի ֆոնդի համալրում, գնումների, նվիրատվությունների և այլ միջոցներով,
ը) ազգային և արտասահմանյան պետությունների մշակութային, գիտական հարստությունների, միջազգային հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ սերտ համագործակցություն
23. Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակներն են՝
1) հավաքում, կազմակերպում, պահպանում և օգտագործման է տրամադրում գրադարանային փաստաթղթերը, դրանց վերաբերյալ և այլ բնույթի տեղեկույթ.
2) ցուցակագրում, դասակարգում և կազմում է գրադարանի հավաքածուի գրացուցակը և մատենագիտությունը.
3) ապահովում է գրադարանի հավաքածուի և տեղեկատվական համակարգերի մատչելիությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
4) ապահովում է գրադարանից օգտվողների համար որակյալ ծառայությունների մատուցումը.
5) նպաստում է կրթությանը, խթանում է ընթերցանությանը, ինքնակրթությանը և քաղաքացիների սոցիալական հաղորդակցման գործընթացներին.

6) տրամադրում է գրադարանի հավաքածուի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկույթ՝ Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի պետական գրացուցակի համար.
7) ապահովում է գրադարանային հավաքածուներում գտնվող գրավոր հուշարձանների պահպանումը և վերականգնումը.
8) ներդնում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ.
9) հաշվառում, մշակում, համակարգում է մուտքագրվող նյութերը, գրանցում դրանց վերաբերյալ տեղեկությունը թղթային և այլ նյութական կիրչների տվյալների շտեմարաններում.
10) իրականացնում է տպագիր արտադրանքի հավաքածուի ամբողջականությունն ու անվտանգությունն ապահովող համալիր միջոցառումներ (խնամք, վերականգնում, կազմում, բուժում և այլն).
11) սահմանում է գրադարանից օգտվելու կարգը, օգտվողների կողմից պատճառված վնասի փոխհատուցման ձևերն ու չափերը.
12) որոշում է համալրվող գրականության տեսականին.
13) մշակում հիմնական գործունեության ընթացիկ և զարգացման հեռանկարային ծրագրերը.
14) հիմնադիրի հետ համաձայնեցնելով՝ իրականացնում է հավաքածուի օգտագործման համար ոչ պիտանի տպագիր արտադրանքի դուրս գրումը, բացառությամբ պատմամշակութային արժեքների.
15) ձևավորում իր տնտեսական ծրագրերը, որոշում ծառայությունների մատուցման կարգն ու գները, եթե ՀՀ Օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ.
16) պահովում է կազմակերպությանն ամրացված շենքերի ու շինությունների պահպանությանն ու օգտագործմանն անհրաժեշտ պայմանագրերը (ռեժիմը)
17) իրակիանացնում է հակահրդեհային անվտանգության միջոցառումներ.
18) համագործակցում է ՀՀ և արտերկրի գրադարանային գործի, մատենագիտական, տեղեկատվական կազմակերպությունների հետ՝ տեսական և գիտագործնական խնդիրների, մշակութային կրթադաստիրակչական ծրագրերի մշակման և իրականացման նպատակով:
19) նպաստում է գրադարանից օգտվողների մշակութային, կրթական, գիտական, տեղեկատվական, մտավոր (ինտելեկտուալ), գեղագիտական զարգացմանը, ժամանցի ու հանգստի կազմակերպմանը.

24. Կազմակերպությունը հիմնադիրի որոշմամբ կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
ա) հրատարակչական գործունեության իրականացում,
բ) կրթադաստիարակչական լրացուցիչ ծրագրերի իրականացում,
գ) համակարգչային ծառայությունների իրականացում:
Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

25. Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար Կազմակերպությունը՝ իր կողմից կնքված պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր հանրապետության ու օտարերկրյա մշակութային կազմակերպությունների, գիտական հիմնարկների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

26. Պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների, կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման և այլ բնագավառներում:
27. Կազմակերպությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադիրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:
Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Կազմակերպությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիզենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

28. Պետական գրանցման պահից կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:
29. Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը եւ Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:
Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:
30. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեված դեպքերի:
Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) Կազմակերպության հիմնադրումը,
բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,
զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,
է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը:
31. Հիմնադիրը՝
ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,
գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գոործունեության վերստուգման արդյունքները,
ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման պահպանության նկատմամբ,
զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,
է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
ը) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,
թ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ,
ժ) իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրագրված գույքը (այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները),
ժա) հայցով դիմել դատարան՝ օրենքով կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով,
ժբ) չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,
ժբ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների, նոր մասնագիտություններով կրթական ծրագրերի սահմանումը,
ժգ) մասնագիտությունների և մասնագիտացումների անվանացանկերի հաստատումը,
ժդ) ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների հաստատումը,
ժե) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
ժզ) Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի հաստատումը,
ժէ) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

32. Կազմակերպության տնօրենն իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը:
ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Գավառ համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն

կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Գավառ համայնքի ղեկավարը:
գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:
դ) Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:
ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:
զ) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
է) Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը, Հիմնադրին, պետությանը պատճառված վնասի համար, ընդ որում տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

33. Կազմակերպության տնօրենը՝
ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,
բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ ու նշանակում կարգապահական տուժեր,
ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
զ) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,
է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
թ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում հիմնադիրին,
ժ) նախագահում է կազմակերպության խորհրդի նիստերը,
ժա) իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,
ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

ժգ) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմնի հաստատմանը.
ժդ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ
ժե) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

34. Տնօրենի բացակայության դեպքում, Հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

35. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
36. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը:
37. Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր:
38. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
39. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:
40. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
41. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:
42. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
43. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Գավառ համայնքի ղեկավարի որոշմամբ:
Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

44. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարացնելու կամ փոփոխելու համար:
45. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
46. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտաերկրյա իրավաբանական անձանց և /կամ/ ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և /կամ/ ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և /կամ/ ձեռնարկությունների, օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքից:
47. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում աշակերտների ուսման վարձից գոյացած գումարները, ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները և հանգանակությունները, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության տրամադրած դրամաշնորհները:
Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:
48. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հիմնադիրը:
49. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) հիմնադիրի կողմից ընտրված աուդիտորի կողմից:
50. Կազմակերպությունն պարտավոր է.
ա) ՀՀ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,
բ) աշխատանքային պայմանագրեր կնքել աշխատակիցների հետ,
գ) պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

դ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
ե) հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը,
զ) ապահովել Կազմակերպության փաստաթղթերի (Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաղտաթղթերի, Կազմակերպության ներքին փաղտաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,
է) կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

51. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվուն է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:
52. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:
53. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
55. Կազմակերպության կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքոց սահմանված դեպքերում:
56. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:
57. Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Գավառ համայնքի բյուջե:
58. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
59. Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարեցված՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյաններում համապատասխան գրանցում կատարելու պահից: